

Մ.ՄՅԱԿՈՆԻԿ



Զամգոն

Յամգոն

և

Պամգոն

ՈՒԼԻԿՆԵՐ


894.3620

15-82

2011-07



Մ. ՄՅՈՒՇԵՒԿ



ՆԿԱՐՆԵՐԸ ԵՍԻՐԻ

03 JUL 2013

13824

Խմբագիր՝ Հ. Հայրապետյան
Քարգմանիչ՝ Վեսպեր
Ցեխ. Խմբագիր՝ Ս. Գասպարյան
Սերագրիչ՝ Ռ. Նեանյան

Գլավխաի լիազոր Կ.—280, պատվեր 887
Հրատ. 3506, տիրած 5000

Պետհրատի տպարան
Յերեվան, II Գնունի, 4



57065-66



Յեղեկ ե միշտ ու չի լեղել՝
Խեղճի ցավը շատ ե լեղել՝

Մորուսով մի այժ ե լեղել,
Սարեր, ձորեր ման ե լեկել՝

Լեռներից-լեռ թռչկոտելով,
Ամեն ցավի դիմանալով,

Իր քրտինքով, աշխատանքով՝
Ապրում եր նա միշտ սիրաբ գոն՝

Յեկ շրջում եր գլուխը կախ,—
Ունեք լեքեք ուլիկ ուրախ.

Մեկը՝ Զանգլոն, մյուսը՝ Մանգլոն,
Մեկն ել փոքրիկ սիրուն Պանգլոն՝





Իսկ լերրորդը՝ Պանգլուն փոքրիկ,
Թովուռն ու նախշուն-տոտիկ, —

Մի լավ, աշխուժ ուլիկ եր նա՝
Շարժումներով խաղողն իրա:

Ունեի սիպտակ ու սև մազեր,
Ինչպես նաև քնքուշ նազեր:



Յեկ ամեն որ մութ ու լուսին,
Առավոտյան բարի լուսին՝

Մայր այժն շտապ վեր եր կենում,
Զանգլուի քեֆը հարցրնում,

Քաղցր հայացք զցում ուրախ՝
Են Մանգլուին՝ զլուխը կախ:

Պաշիկ խլում շրթունքներով՝
Ժիր Պանգլուից կարոտանքով:

Ապա ուրախ դուռը փակում՝
Դեպի կանաչ սարը վազում:

Սարի լանջին արածում եր,
Փայտերից-ժայռ վուստուսում եր,

Ստոն աղբյուրից ջուր եր խմում,
Ցավ չեր տեսել իրա որում:

Իսկ իրիկվա վերադարձին,
Կանչում եր այժը սրտագին.

«Ձանգրո՛, Մանգրո՛, սիրո՛ւն Պանգրո՛,
Դեն, շնւտ արեք,
Դուռը բացեք:

Բերնովս ձեզ ջուր եմ բերել,
Կրծքովս ձեզ կաթ եմ բերել,
Կոտորներովս խոտ եմ բերել:



Մայրիկի ձայնը լսելով՝
Ուլիկները մրկրկալով
Վազում ելին ուրախ-ուրախ,
Դուռը բացում մորը վրա:
Մայրը նրանց կաթ եր բերել,
Յեղջուրներով խոտ եր բերել...
Ուտում ելին, խմում անհոգ,
Ձունեկին վիշտ, և վնչ ել հոգ:

Ապա կրկին մայրը բարե՛
Համբուրելով ուլիկներին՝

Դուրս եր վազում ուրախ-ուրախ,
Դուռը փակում նրանց վրա:

Մին ես սարում, մին եմ ձորում
Ման եր գալիս, կեր հավաքում,—

Կուրծքը լցնում քաղցր կաթով,
Կոտորները բարձում խոտով:





Ձմեռն անցավ՝ լեկավ գարունն,
Գյուղին բերեց ուրախութիւնն.

Զարդարվեցին լեռ ու հովիտ
Ծաղիկներով լուսափթիթ.

Յերգում ելին թռչունները
Յեւ վարարում գետակները:

Իսկ սարերը՝ ձյունով պատած,
Այգիներն ել՝ ասես մեռած՝

Հագել ելին կանաչ շապիկ,
Զորս կողմը վարդ, ծիլ ու ծաղիկ...

Ու մայր այծը, զվարթ այծը,
Ծծերն անուշ կաթով այծը՝

Մին ես սարից, մին ես ձորից,
Զուլալ ու սառն աղբյուրներից

Կեր եր ճարում, ջուր եր խմում,
Միս եր կապում ու չաղանում.



Կործքը լցնում առատ կաթով
 Ու տուն դառնում խոր կարոտով:
 Ո՛ր, մայրիկ այժ, դու, մայրիկ այժ,
 Մատաղ լինեմ քեզ, մայրիկ այժ.
 Քեզ են սպասում Չանգլուն, Մանգլուն
 Ու փափկամազ սիրուն Պանգլուն, —
 Բալիկները քո սիրասուն:
 Մարերից պաղ ջուրն է հոսում.
 Մարմանդ հովից խտան էլ հիմա
 Ալիք-ալիք ծփում ահա:
 Լեռները լեյ, ձորը իջիբ,
 Բիչ էլ խոտ կեր ու ջուր խմիր...
 Բայց մի որ էլ որը մի՞նեց,
 Մշուշն իջավ՝ լույսը ծածկեց:
 Ուրախացավ գալը սոված,
 Ու դուրս լեկավ՝ աչքը արնած...
 Ասել են մեր պապերն հնում,
 Թե «գալն ամպած որն է սիրում»:
 Ու ման գալով գալը լերկար
 Այտեղ, այնտեղ, թե՛ ձոր, թե՛ սար,
 Հանկարծ հիշեց խեղճ Չանգլուին,
 Մանգլուին ու ժիր Պանգլուին:



Հիմա տանը մեն-մենակ են,
 Գնամ, ասաց, դրանց բռնեմ...

Յեվ գարնան այդ մշուշ որին՝
 կանգնեց նրանց տան առաջին:
 Մի քիչ նայեց կանգնած տեղում,
 Զգաց՝ աչքում հուր եր վառվում:
 Ապա փոխեց իր ձայնը նա,
 Վորպես զի վոչ վոք չիմանա,
 Թե գալն է նա, հետո ասաց.
 «Դու իմ Չանգլո, դու իմ Մանգլո,
 Դու լեյ սիրուն ու ժիր Պանգլո,
 Բերնովս ձեզ ջուր եմ բերել,
 Կրծքովս ձեզ կաթ եմ բերել,
 Կոտոշներովս խոտ եմ բերել,
 Դեհ, վեր կացեք դուռը բացեք»:
 Ուլիկները լերբ լսեցին՝
 Ուրախ-ուրախ դուռը բացին:
 Բայց ինչ տեսնեն նրանք հանկարծ,
 Գազան գալն է իրենց դիմաց:
 Շփոթվեցին, իրար անցան.
 Ո՛վ եր տեսել այսպես փորձանք:



Անխիղճ գայլը ուրախացած՝
Գործի անցավ բերանը բաց.

Պատեց կերավ և Չանգրոյին
Յեւ բարակիկ խեղճ Մանգրոյին:



Ժիր Պանգրոյին բաց չգտավ
Սրբուն խմորն արդ անիրավ:

Քեֆը տեղը, տոգած ու կուշտ՝
Դուրս շտապեց գազանը շուտ:

Դուռը թողած բաց ու անփակ,
Ու չորս կողմը՝ մշմշ ափսոսակ...





Իսկ մայր այժը սարում, ձորում,
Մին ես կողմում, մին ես կողմում,

Ծմակներում, անառններում,
Առատ ու լաջն արտաներում,

Բարձր սարի գոլ կատարին,
Յից ժայռերի անհաս ծայրին՝

Փորը լցրեց կանաչ խոտով,
Աղբյուրների պաղ ջրերով:

Ապա հիշեց նա իր անգին
Յեվ սպասող ու լիկներին:

Թողած աղբյուր, կանաչ ու սար,
Յերբ նա շտապ տունը հասավ—

Ու տեսավ միշտ փակ դուռը բաց՝
Վախից դեղնեց, անշարժ մնաց:

Հետո հանկարծ և շտապով,
Ու չորս բորբոն աչք ածելով՝
Ներս մտավ նա սրտով արտում,
Ու կասկածի անը սրտում:
«Զանգրո, Մանգրո, կանչեց, ուր եք,
Վոր տեղ եք դուք, շուտ դուրս լեկեք»:
Մեկ էլ տեսավ մի անկյունում
Խեղճ Պանգլոն ե նստած դողում:
Հենց վոր մորը տեսավ Պանգլոն՝
Վզոմբ ընկավ հեկեկալով,
Ասաց. «Մայրիկ, քեզնից հեռու,
Յերբ որն ամպեց, դարձավ պղտոր,
Են արնախում գայլը լեկավ,
Մեզ խաբելով տունը մտավ՝
Խեղճ Զանգլոյին ու Մանգլոյին
Բռնեց կերավ. իսկ ինձ, մայրիկ,
Նա չգտավ...»:

Ու մայր այժը սաստիկ հուզվեց,
Աստիկ հուզվեց՝ կրակ կտրեց,





Այժի սիրտը երվեց-վառվեց,
 Բարկութունից կրակ կտրեց:
 Բուռնցքները ամուր սեղմած՝
 Քայլեց չերկար, հուսահատված.
 Հեռոց ցառիկեց ու կանգնեց նա
 Գազան գալլի կտրի վրա:
 Թունդ հայհոյանք թափեց գլխին.
 Գլխին, գնչին, սև ըռեխին.
 Յերդիկից ցած մի քար գցեց,
 Հեան ել վոտքը գետնին խփեց:

Գայլը լեփել եր կաթնապուր.
 Այժի քարը շանցավ ի զուր—
 Ընկավ խկուռն ամանի մեջ:
 Գայլը գոռաց. «Ո՞վ ե անվերջ
 Յերդիկիցըս քար գցողը,
 Կաթնապուրըս կեղտոտողը.
 Ո՞վ ե աչնաեղ կտրիս վրա՝
 Ման ե գալիս արագ-արագ,
 Ճաշի ժամին խանգարում ինձ,
 Փոշի թափում ամեն կողմից»:
 Այժը ասաց. «Հուզվողն լես եմ,
 Կտրիգ վրա քայլողն լես եմ,

Կոտորչներըս արշին ու կես,
 Թե սիրտ ունես՝ դուրս արի տես...»:

Գայլը քթի տակ մրմռաց.
 «Գնամ-տեսնեմ ի՞նչ կա», ասաց:

Ու մայր այժը կրակ կտրած՝
 Գազան գալլին այսպես ասաց.
 «Իմ Զանգլույին ու Մանգլույին,
 Գու չես կերել, ասն հիմի»:

Գայլը թեև ուզեց մի պահ
 (Վորպես ճարպիկ հին խաբեբա)
 Այժին խաբել և ազատվել,
 Նստել հանգիստ ճաշը ուտել,
 Բայց զուր անցան շանքը նրա
 Ու կեղծ խոսքը՝ չերկար-բարակ:

Վերջը հաստատ վորոշեցին
 Գործը քննել տալ առանձին:





Հեռու, կարմիր արևմուտքում՝
Արևն հանդարտ մայր եր մտնում.

Շողքը ընկել եր սարերի՝
Կապույտ, կապույտ կատարներին:

Իսկ ամպերը՝ շարան-շարան՝
Ձով լերկնքում, լեռան վրա,

Իրենց հսկա սովերներով
Շրջում ելին սրորվելով:

Հանդից ել՝ կուշտ նախիրն հանդուրտ
Փոշու ամպում և անընդհատ

Փալիս դեպի գլուխը հիմի
Գլուխի կանաչք առած մի-մի

Կթոց, կաթսա մաքուր-փալլուն՝
Սպասում ելին նախրի գալուն,

Վոր կաթ կթեն առատ-առատ —
Գառնանք սակայն թողած կիսատ

Մեր պատմության:





Ժամ գնացին, քիչ գնացին,
 Մար-ձորերով հաս գնացին:
 Մոտերքում մի ծեր մոլլա կար,
 Անգութ, ժլատ և շատ ել չար:
 Յերբ մալը այծը քիչ յետ մնաց՝
 Գալլը շաղլիկ մի գառ ճարած
 Վազեց-գնաց մոլլի տունը,
 Ու բաց արավ ստի տուտը...
 Ու րախացավ մոլլան ծերուկ,
 Յերբ ըստացավ մի շաղ գառնուկ
 Իբրև կաշառք: Իսկ մեր այծը՝
 Ձեռքը գատարկ այնտեղ գնաց:
 Մոլլան հարցրեց. «Ի՞նչ կա, սվ այծ...
 Ուղիղ ճամբադ ծռած դու այծ...
 Իարձյալ ի՞նչ նոր գործեր ունես,
 Ի՞նչ նոր խնդիրք, այ՛ աներես»:
 Այծը աբաց. «Յավա շատ ե,
 Վո՛չ վոք չկա, վոր աշխատի
 Դատա արդար ձևով տեսնել.
 Ո՞վ չի լսել, չի իմացել,

Վոր անխիղճ գայլն որ-ցերեկով
 Յերկու ուլրս կերավ հերթով»:

Մոլլան սասց. «Մուտ մի խոսի,
 Ուրիշներին մի զրպարտի...

Դու միշտ վատ ես ու կովարար,
 Զրպարտիչ ես ու անարդար.

Դու քո աստծուն մոռացել ես
 Ու ծուռ ճամբում մոլորվել ես.

Ինձ տասանորդ չես աալիս դու,
 Վո՛չ ել նվերդ մտնում իմ տուն:

Լավ լսիր ինձ, այժ աներես,
 Առանց նվեր՝ իմ տանից ներս
 Վոտք չկոխես»):





Այժը դարձավ՝ գայլին ասաց.
«Հսիր հիմի, սե՛ արարած,
Մոտերքսւմ մի լավ դարբին կա,
Գնանք նրա մոտ այս անգամ»:
Շատ գնացին, քիչ գնացին,
Սարով, ձորով հա՛ գնացին—
Հասան դարբնի տունը փոքրիկ:
Դարբինն ասաց. «Ի՞նչ լուր բարի»:
Մեր այժը թե՛ «ցավս շատ է,
Վնչ վոք չկա, վոր աշխատի
Դատս արդար ձեռով տեսնել.
Ո՞վ չի լսել, չի իմացել,
Վոր անխիղճ գայլն որ-ցերեկով
Յերկու ուլըս կերավ հերթով:
Յեղընյր դարբին, լավ իմացիր,
Միայն իմս չե: Սա ել գիտցիր,
Վոր հանդի չաղ վոչխարներին,
Գլուղի լավ-լավ տավարներին
Պատառոտողն անվերջ սա՛ չե.
«Տերը չես եմ», ասողն սա՛ չե.
Այս արնախում գայլը դաժան՝
Մեզ թշնամի՛ չե ամեն ժամ»:
Լսեց դարբինն ու գայլացավ,
Յերբ վոր արդեն լավ իմացավ,

Թե խարդախ ե գայլը իրավ,
Արյունարբու և անիրավ:
Ասաց. «Այժմ թե՛ դու, թե՛ նա
Պետք է կովեք թունդ, անխնա...»:
Ու թողեց նա իր գործերը,
Վառվող կրակն ու բոցերը,
Յեվ դառնալով, գայլին ասաց.
«Մոտեցիր ինձ, կովից առաջ
Պետք է սրել ատամներդ»:
Գայլը նրան՝ «Իեհ շուտ արեք»:
Դարբինն առավ ակցանը մեծ,
Ապա դարձավ ու մեկ առ մեկ
Հանեց գայլի ատամները:
Իսկ մեր այժի կոտորները
Մի լավ սրեց, սրտով սրեց...
Ընկած ելին շուրջը՝ մեծ-մեծ
Ատամները գազան գայլի՝
Անուժ ու թուլը, առանց փայլի:
«Հիմի, կանչեց, թե՛ դու, թե՛ նա՝
Կովեք իրար հետ անխնա...»:





Այժը ուրախ, կրակ կտրած՝
Վազեց-կանգնեց գալլի դիմաց:
...Իրար անցան, իրար սովին,
Տվին իրար քթին, բերնին:
Մեկ ել այժը խիստ աշխուժով,
Իարքնի սրած կոտուչներով
Պատուեց սուգած փորը գալլի,
Արյուն թափեց ալիք-ալիք:
Գալլը կանչեց-
«Աման, աման, ծակվեց փորըս,
Իուրս թափվեցին աղիքներըս,
Հարսն, հասեք, հարսն, հասեք,
Ինձ այս այժիցն ազատեցեք»:
ժպտաց այժը սրտով ուրախ,
Ցատկեց-կանգնեց գալլի վրա,
Ասաց. «Ո՛վ գալլ, անխիղճ գազան,
Հանցանք ունես դու գանազան-
Հանցանքներիդ համար հազար՝
Իու այս տխուր օրին հասար.
Բալիկներիս թող չուտելի՛ր՝
Աման փորըս, չկանչելի՛ր...»:



774

13824

ԳԻՆԸ 1 ՈՒ 40 Կ.

9007



894.3625
 Ե-82

Մ. ՄՅՈՒՓԻԿ
 Շ Ա Ն Դ Յ Ո Ւ
 Շ Յ Ո Ն Դ Յ Ո Ւ
 Մ Ա Ն Դ Յ Ո Ւ

Գեղ. ՍՍՐ Արմենի, Երևան, 1986 Գ.

894.3625
 Ե-82